


ՅԱԿԱՆ ՇՈՂԵՆԻ



ՎԵՐԱԴԱՐՁ

ՍՊԵՇԱԼԱԿԱՆ ԳՐՈՒ

891.99

26160

6-79 Cnntky, 8.

Unterwurzeln:

3 kg.

80.5.6.1, କୋର୍ଟରେ

891.99

Digitized by srujanika@gmail.com

6-79

ՎԵՐԱԴԱՐՁ

(ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

229

$$\begin{array}{r} \underline{-} \\ 5853 \end{array}$$



ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՒ
ԵՐԵՎԱՆ
1948

**Ц. ШОГЕНЦ
ВОЗВРАЩЕНИЕ**
(Стихи)
(На армянском яз.)
Советский писатель,
Ереван, 1948 г.

Տ Ա Ն Ա Կ Ա Ն Գ Ի Շ Ե Ր

Նորից տոն է ու ցնծություն այս գիշեր,
Հրթիռները դեպի երկինք սլացան.
Շուրջը վուած լուսնեղջուրներ ուկեհեր՝
Որոտում է հաղթանակած մեծ Մոսկվան:

Պողպատաճույլ բոցաբարբառ շուրթերով
Համերգում են թնդանոթներն ահավոր,
Նրանց երգը՝ երջանկության շողերով՝
Տարածվում է աշխարհներում հեռավոր:

Հրթիռները կայծակնաթե երամով
Պսակում են աշտարակներ, գմբեթներ,
Եվ աշխարհն է երգում այնպես հոգեթով
Սովետական մարդու դովը այս գիշեր:

Եվ երկինքը շողաշոայլ գեղեցիկ,
Շողշողում է երանդներով մայիսյան,
Զայն է տալիս զողանջյունով իր վառքի
Մեր դարավոր մայրաքաղաքը Մոսկվան:

Ու հնօրյա մեծ Կրեմլից այս պահին .
Սավասնոսմ ին սուտակ աստղեր լուսավոր,
Լույսերով են նրանք օծում մեր ուղին
Մինչև ելքա, մինչև Մյունխեն թռւնավոր

Յնձա', ցնձա', սովետական իմ երկիր,
Հրթիոների անձրեներում այս գիշեր,
Եվ սալյուտի քո լույսերով հեղեղիր
Հորիզոններ ու դեռ խավար եղերքներ:

Մեր գնդերին աշխարհն արար այս պահին
Սիրագորով գովք է երգում, տալիս փա՛ռը,
Չե՞ որ հիմա եղեռնագործ Բեռլինին,
Նրանք տվին հողմակործան համագարկ:

Փա՛ռը ձեզ ու գովք, մեր մարտիկներ
Փառապանծ,
Դուք որ ասաք բերդերը մութ ոսխի,
Չեզ համերժ փառք, մարտիրոսներ մեր
Ընկած՝
Անմահության դափնիներով մեր երկրի:

Փառաբաներ, իմ ընկերներ, հեռու-մոտ,
Այս գիշերը նովիտական, տոնական,
Մեր երկիրն է տալիս ողջույն կրակու
Կարմիր գորքի ասպետներին հաղթական:

Եղ ձդվում են ճառագայթներ թափորով,
Հասնում այնուեղ, արևմուտքի խավարին,
Մեր վրեժիշ ցասման բոցն են նրանք ծով
Տանում դաժան ու շարասիրտ թեռլինին:

Ուշ կիշեր է, գարնանաբույր, երազուն,
Սակայն Մոռկլան որոտում է դեռ ահեղ,
Փառքի ոալյուտ, Մտալին քեզ իմաստուն,
Հաղթանակած ըս բանակին փառահեղ...

1945 թ.

Ո Ղ Զ Ո Ւ Յ Ն, Բ Ա Ք Ո Ւ

Ողջույն, թաքու, Հեղոսական դու իմ քաղաք,
Քեզ եմ բերել կառոտակիղ սիրու ընծա.
Չմոռացա ծովդ կապույտ, երկինքդ բարկ,
Պատերազմի մրրիկներում այնքան դաժան:

Չմոռացա վիշկաներիդ թափորը սև,
Որոնք կարծես խիտ շարքերով երթի ելած՝
Հաղթանակած պատերազմից ետ նն դարձել
Իրենց անդուլ բազուկները երկնին հենած:

Իմ կոծքի տակ երգդ եմ զգում քո հուրհրան,
Երդդ անմար և հուրհրան և սիրելի,—
Բերել եմ քեզ ողջույն ու սեր Արարատյան՝
Կապտալազուր ժպիտները մեր Արաքսի...

Բերել եմ մեր սերն անկաշառ, եղբայրական
Ճերմությունը հանդեսներիդ համար ընծա.
Եվ Սևանի ալիքների նվիրական
Բյուրեղ երդդ—Կասպիական ծովիդ անծայր:

Ուր էլ լինեմ—հարազատ և մոտ ես դու,
Զեմ մոռանա անումները բանվեցի,
Եվ անունդ Շահումյանի փառքով օծուն,
Բարու քաղաք ամենուրեք պիտի հիշվի:

Ողջո՞ւն, Բարու, ակունք պայծառ երազների,
Ողջո՞ւն ջանքի լնկերներին հերոսական。
Ադրբեցա՞ն, սովետական գեղեցկուհի,
Քեզ բյուր ողջույն Հայաստանից սովետական:

Մ Ո Ս Կ Վ Ա

Ննջում է Հիւմա խաղաղ Մոսկվան,
Դլուխը դրած աստղեղի բարձին—
Նրան երիզող դետը Յառագան՝
Հոսում է խաղաղ դաշտեսով անծիր:

Մեր բազեներն են իշխում երկնքին,
Տարածած իրենց թևերն հոկայի
Եվ առշավում են մարտադաշտ կրկին,
Զորախմբերը մեր քաջ տանկային:

Գիշեր է այժմ: Ննջիր, Մոսկվա,
Էլ շի վրդովի հանդիսող ոչ ոք,—
Թող քո աստղերը պայծառ շողշողան,
Ամենքիս սրտին հարազատ ու մոտ:

1943 թ.

ՄԱՐՏԻԿ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՈՂՋԵՐԹԸ
ՊԱՐՏԻԶԱՆՈՒՀՈՒՆ

Դու ինձ նայեցիր վերջին անգամ
Եվ հեռացար ըստ քայլով հաստատ,
Արևը հեռվում դանդաղ հանգավ,
Վառվեցին երկնի աշքերն արծաթ:

Անցար ճակատի գիծը թաքուն՝
Չեռքիդ մեջ նանակ ու ավտոմատ.—
Նման էիր այն հերոսուհուն,
Որ մահն ընդունեց դեմքով հպարտ:

Պարտիզանուհի դարձար խիզախ
Սիրտը կոխվ՝ հաղթանակ տենչաց,
Հայրենի տունը ըստ հրկիզված
Վրեժի պատգամ քեզ շշնչաց:

Ոչի՞նչ, այնուղ ուր դու ես դնում,
Մենք եւ մարտերով շուտով կգանք,
Որ վերանան մահ ու խոշտանգում,
Որ ես խլենք կյանքը մեր ազատ:

Եվ այդ հանդիպման ժամին վսեմ,
Թող ցնծա մեղ հետ աշխարհն արար,—
Եռ երջանկության դովք կհյուսեմ
Մեր հաղթանակի և մեղ համար:

Հ Ա Ղ Ի Ո Ւ Ժ Ը

Անտառն էր վառվում արկի ցասումից,
Ճարճատում էին ծառերը մեռնող,
Եվ հողն այն, որ տվեց ինձ կյանք ու բարիք,
Հառաշում էր խոր ախուր հայացըով։

Եվ առավոտյան թշնամու դեմ նենդ
Թիտի վերստին գնայինք գրոհ։
Չների մեջ սառ, երկնքի տակ մեզ
Մենք հաղթանակի հավատն էինք կրում։

Հողը, որից ես մի օր կյանք էի առել
Եվ աճել նրա, գրկում քնքշագին
Չէր թվացել ինձ նա այնքան վսեմ,
Այնքան թանկագին։

Եվ իմ էությամբ զգում էի խոր
Ահագնած ու մեծ ուժը մայր հողի,
Որ փոթորկում էր, ծփում ահավոր
Եվ մղում էր մեզ նորից գրոհի։

Հո՛ղը, մեր հո՛ղը, հո՛ղը սրբազն
Մոր սրտի նման լայն և զգայուն.
Հո՛ղը, մեր հո՛ղը, վե՛հ, նվիրական
Մեզ ուժ ու կորով, կամք էր հաղորդամ:

Եվ նա մղում էր մեզ դեպի գրոհ,
Որպես կյանք ազատ և հայրական տուն,
Իսկ հս սրբազն պատիվն իր կրող՝
Պոհտ ու մարտիկ-կովի մեջ անհուն:

Ք Ա Ք Շ Ո Ւ Թ Յ Ո Ւ Կ Ե

Դոնի ափին լնկա մի օր վերավոր,
Ծնկերներս կովով առաջ դնացին,
Կսկծում էր վերքը կրծքիս այնքան խոր
Եվ հս տխուր և միայնակ տնքացի:

Եվ հանգչում էր վերջին շողը իմ կյանքի,
Մառախուղն էր ծածկում աստղերն իմ մարմանդ,
Խամրում էին խարսչեկի մեջ իմ վերքի
Երազներիս ծաղիկները սիրառատ:

Դու ինձ հասար այդ աճավոր մութ պահին,
Իմ ոռւս քո'ւյր, մահ ու երկյուղ մոռացած,
Դեղ դրեցիր-սպեղանի իմ վերքին
Եվ նայեցիր քո աշքերով ինձ պայծառ:

Շիեցիր դու քո ձեռքերով փաղաքուշ
Իմ ճակատը հոգնած այնպես ու արնոտ,—
Եվ այդ պահին, իրիկնային ժամին ուշ
Երկա՛ր, երկա՛ր դու նստեցիր սնարիս մոտ:

Չէի տեսել դեռ քնըշություն այդքան խոր,
Կարեկցություն այդքան առատ, մտերիմ,
Քրոջն այդպես, այդպես քնըուշ անձնազո՞հ
Եվ հարազատ ամենքին:

Փա՛ռը քեզ, փա՛ռը քեզ, անզուգական իմ ոռւս քույզ,
Դովը ու օրհներ այնքան քնըուշ ձեռներիդ,
Քանի՛-քանի՛ հիվանդների որպես քույզ
Ամոքել ես մաշող ցավը վերքերի:

Հ Ա Յ Ա Ս Ա Ն

Մեծ կենինի արեղակը բարձրացավ,
Գարուն բերեց քո լեռներին հողմածեծ
Եվ փրկարար եռանդ ու լիցք ստացած
Ետեղծագործ աշխատանքի ելար մեծ:

Կերտեցիր դու կյանքի հզոր պատվանդան
Նրկաթաճույլ քո ձեռքերով շինարար,
Քեզ փառք բերեց, Հերոսամայր Հայաստան,
Ստալինը—վեհ, հանճարեղ դեկավար:

Նոր մատյաններ դու քրտնաթոր գրեցիր՝
Դեղեցկության, ճշմարտության կրակով.—
Իմացության, պատվի դրոշ կրեցիր
Հրաշագործ քո, տքնության կորովով:—

Ստեղծեցիր ճարտարությամբ օրավուր
Սեփական տուն, հայրենական գերդաստան,
Բայց թշնամին կրկին ելավ ահավոր,
Որ կործանի քո ոգին ու ապագան:

Զավակներդ—վոթորկածին արծիւլներ—
Դարձան զինվոր ու դյուցազում զորավար,
Քո անունով, մայր Հայաստան, անվեհեր
Նրանք տվին ոսոխներին համազարկ:

Քո անունը իրենց անեղծ շրթերին
Բազեներդ զրավեցին հազար բերդ,
Քո զրոշով նրանք հասան Բեռլինին՝
Կործանեցին ոճրաբերդը չարաղեա:

Հենված այսօր հաղթանակիդ բարձունքին
Դու կանչում ես որդիներին քո պանդուխտ,
Որ հավարվեն, եւ շմնան տարագիր,
Չթափառեն օտարության մեջ անտո'ւն:

Դու բացել ես նրանց առաջ զիոկդ մեծ
Ու կանչում ես. «Եկեք ամեն եղերքից,
Ստալինը երջանկություն ինձ տվեց,
Դարձեք տերեւ հայրենի տան ու հերկի...»:

Ու գալիս են որդիներդ տարագիր՝
Էսելով քո մայրագորով կոչը մեծ.
Տնծա՛, ցնծա՛, հայոց ազատ իմ երկիր,
Հոկտեմբերից քո արևը հառագեց...»

Կ Ա Ր Ո Տ

Դիտե՞ւ Շամխորի ափերը ծաղկած,
Այն կանաչագեղ ձորերը շքնաղ,
Ուր ծաղիկները մետաքսով զուդված
Ինձ են սպասու՞ հիմա ցողաշալ:

Եղենիները ճյուղերով քնքուշ
Հեղ օրորվում են լեռներում կապույտ,
Կակաչը հովտում գիշերը անքուն
Ինձ համար կարմիր պսակ է կապում:

Եվ Շամխոր գետի ջրերը արծաթ
Ժայռերն են ծեծում կարոտից իմ խոր,
Մայրս սեղան է բացել լիառատ,
Ճամփես նայում հիմա ամեն օր:

Եվ իմ նշենին ոսկե երազում
Ինձ է սպասում ամեն առավոտ,
Վարդինիներն են կարոտով նազում
Զինջ այդաբացին այգու մեջ շաղոս:

Եկ, այնտեղ գնանք, ափերն այդ ծաղկած,
Զահել օրերի աղջիկ իմ դարուն,
Եղենիների նման հեղանազ
Իմ հայրենի տան հարս կղառնաս դու:



ԴԵՊԱՍԻԿՆ ՈՒ ԿԱՌԻՆ

Ես լսել եմ մի հին զրույց,
Թե եղել է դեղձանիկը շինաբար,
Ունեցել է նա սուր կտուց,
Հողն է փորել անդադար:

Եվ շինել է առու անխոնջ,
Որ ջուր տանի դեպի պուրակն իր սլաքակը,
Որ ընձյուղվի ամեն բողբոջ,
Բացի ուրախ աշքը փակ:

Իսկ այն կկամ կեչի ծառից
Ճիշերով շար հեղանել է ժիր դեղձանիկին,—
Թե կտուցդ կառնի քարին,
Ի՞նչ ես զարկում թեղ դետնին:

Եվ այդ օրից ասում են թե
Դեղձանիկն է առվի ափին ճեմում նազով,
Զուր է ըմպում այնպես թեթև,
Ապրում ուրախ իր երազով:

Իսկ ծույլ կկուն ծառին թառած
Հաճախ ծարավ զուր է փնտրում տերևներին,
Մծում է նա ցողը սառած
Ու թափ տալիս թերն իր:

Թեկուզ պետի հուն շրացես
Կամ չփորես անդամ առու,
Բայց դեղձանիկ պիտի լինես,
Ու թե անբան, անմիտ կկու...

ԶՐՈՒՅՑ ՈՐԳՈՒՄ ՀԵՏ

Նայում ես անհոգ դու այս քարտեղին,
Ուր մեր մայր հողի պատկերն է գծված,—
Ե՛կ, որդիս, նստենք այստեղ միասին,
Քեզ պատմեմ հուշեր օրեղից անցած։

Այստեղ նկարված ամեն ծառ ու քար,
Ամեն լեռնապատ, անտառ ու լճակ,
Տեսել եմ, գիտե՞ս ինչպիսի պայթար,
Ինչքան ցնցող պահ ու օրեր կրակ։

Գիտե՞ս, իմ զավակ, որ հայրդ անքուն
Այս հեռուներում ուղիղ հինգ տարի,
Արյան ու մահվան բոցերում անհուն,
Բախտիդ համար է կովել քաջարիւ—

Այս ստեպներով դրոհել եմ ես,
Եվ ճամփին հոգնած ընկել վիրավոր,
Էսկ այս քաղաքի արվարձանում, տես,
Կովել ենք անդուլ երեք հարյուր օր։

Ոտրով անցել եմ անդադասը, անվերջ
Տափաստաններով դաշտերով անծայր,
Եվ մարտեր մղել ամառ թե ձմեռ,
Ռմանըն էլ, որդի'ս, էլ ետ չդարձան:

Ահա քաղաքը փակած մեր առջև,—
Մուկվան գեղեցիկ և այնքան սիրված,
Որ ժպտում է մեղ աղևոտ ու ջերմ
Միծ Հոկտեմբերից դարձած այդարաց:

Եվ հենց Կրեմլի աստղերի համար
Ե՛վ կյանք, և՝ արև, տվյանք ամեն ինչ,
Որ նրանք իրենց լույսերով անմար
Փայլեն ապագա օրերում ըստ ջինջ:

Ահա քաղաք—Ստալինգրադ,
Իր անվամբ հզոր, դարձավ անառիկ
Եվ այստեղ էր որ բանակներն «անպարտ»
Դենեբալներով առանք մենք դերի:

Ահա քաղաքն այս ոճրաքերդը մեծ՝
Բեռլինը՝ ֆաշիստական մի գեհեն
Այստեղ մի շենքի վրա երկնաճիծ
Մենք մեր դրոշը ծածանեցինք վեր:

Այս քարտեզն անխոս, սիրասուն որդի,
Պատմություն է մի հերոսակառում,
Նրա ամեն գետ, ոնց հուշի գոտի,
Դեռ սիրտս է ամեն վայրկյան օղակում:

Մարտի, փորձության տարիները այն
Դեռ մինչև այսօր կրում եմ իմ մեջ,
Եվ մեծ մարտերի պատմությունն համայն
Կհիշեն հավետ...

Ա Դ Զ ՈՒ Յ Ն

Անտառներ թավիշ, ձեզ այցի եկա,
Սիրտըս ձեզ նման, կանաչե՞ց, բացվե՞ց.
Անուշ հովիտներ, ձեր գիղկը ընկա՛,
Հոգուս հովիտն էլ ձեզ նման ծաղկեց:

Աղբյուրներ զանդակ, ձեր ջուղն ըմպեցր,
Սիրո աղբյուրն իմ ձեզ պես կարկաչեց,—
Զովե՞ր, դուք հողնած դիմքա շոյեցիք,
Եվ երգս զվարթ լեռներում հնչեց:

Ողջո՞ւյն ձեզ, ձորե՞ր, սարե՞ր իմ կանաչ,
Սիրոս ձեզ նման կապեց ծիածան.
Իմ եղինիներ, վարդեր ու կակաչ,
Երդերս ձեզնից երանդ ստացան:

Լեռնագագաթներ, ձեզ հալարտ տեսա,
Հոգուս լեռներն էլ ձեզ պես վեհացան,
Դաշտեր հայրենի, դուք ծաղկապսակ,
Երդերս էլ ուրախ ձեզ պես լիացան:

ԶԱԳԻՐ ԴՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՄ

Չեզ իմ հայրենի հարկի տակ տեսա,
Եվ սիրաս նորից ձախրից թէ տած,
Մեր սեդ լեռների բարձունքին հասա,
Կրկին աշխարհը ցնծաց իմ տուզ:

Նույն հովիտներն են մեղ օրոր ասել,
Մեղ իրենց ձեռքով փայփայել ընթուշ,
Մենք նույն ծառի տակ սեր ենք երազել
Նույն ծաղկանց բույրով աճել փաղարուշ:

Որպես բարի մայր նույն հողն է սնել
Մեղ, ինչպես սիրած որդիներ պայծառ,
Նույն տաղերով ենք զեռ մանկուց հուզվել,
Սիրել մեր հանդում ամեն թուփ ու ծառ:

Չեր կարոտով եմ ապրել ևս երկար,
Թե լույս վայելրի, թէ գործի ժամին
Եվ այսօր կրկին ձեղ այցի եկա՞
Ոտքերիս նստած ճամփերի փոշին:

Ողջո՞ւյն ձեղ, ողջո՞ւյն, իմ հարազատներ,
Իմ ջինջ մանկության դուք բարեկամներ,
Նորից ձեղ հետ եմ այցի եմ եկել
Մեր վեհ լեռներին և ձեղ, ընկերներ:

Հ Ա Զ Վ Ո Ր Ո Ւ Հ Ե Ն

Վաստակել է նա, հնձիլ է անդուլ,
Դեղին հասկերի արտերամ մեր ծով,
Եվ այժմ մի ոլո՞չ ննջում է հանդում,
Արտերի եղրի վրանում մի զով:

Կոլխոզի բարդին կանաչ ձեռքերով,
Աստղեր է ցանում իր շուրջը կանաչ,
Եվ խնձորենին ծանրացած դլխով,
Հակվել է առաջ...

Եվ համատարած վերմակի տակ թուխ
Համայն բնություն հանգիստ է առնում,
Ամեն արարած, ամեն ծիլ ու շյուղ
Սուզվել է կապույտ նինջի աշխարհում:

... Գիշերն է թիկնել բարձրաբերձ սարին,
Կապույտ երկնքում աստղերն են նազում,
Իսկ հնձվորուհին արտերի եղրին,
Սուզվել է հանգիստ հնձի երազում...

Ե Ր Ե Վ Ա Ն

Քաղաք իմ անուշ, սիրում եմ իս քեզ,
ինչպես պատանի մի խենթ սիրահար,
Հոգուս մեջ անհուն կարոտ հրակեղ
Վառվում են հաճախ կրակով անմար:

Եվ ես չեմ կարող, երբ լինեմ հեռու,
Մոռանալ մի պահ ամառը քո շոդ, *
Առօրյան քո մեծ—խոհերով եռուն,
Եվ աղջիկների ծիծաղը կրակուտ:

Ես քեզ սիրում ե'մ, իմ նոր Երևան,
Անսովոր ու խոր, խենթահույզ սրտով,
Քո հողի ամեն բուը սրբազան
Ինձ համար երգ է, կարոտ հոգեթով:

Զ Ա Գ Ի Ր

Երբ նինջն է իշնում իմ աշքերին,
Տեղ եմ տեսնում, հայրենի գյուղակ,
Եվ երազիս մեջ մտնում կրկին
Ամբարներդ լի և հյուրընկալ:

Ահա մեր տունը—մեջը հենած
Ուռենու բնին՝ խորհում է խոր,—
Դեմը ցորենի արտեր հասած
Եվ այգիներ բերքից պլխակոր:

Այնտեղ մի արտում հունձ են անում,
Կոլխոզնիկները մեր եռանդով.
Իսկ մայրս նրանց հաց է տանում
Մանկունց հարազատ, ծանոթ ճամփով:

Հովհիվն է նստել՝ բերնին սրինդ՝
Նվազում է նա, հուղում նրանց
Եվ զուլալ, զուլալ մեղմ մեղեղին
Տարածվում է դաշտերի վրա:

Ն Ա. Մ Ա. Կ

Այստեղ մրրիկն է պայթում մոլեկին,
Մահվան հողմերն են շուրջ աղմկում,
Սակայն այդ ահեղ տարերում կրկին
Ահա քեզ համար նամակ եմ գրում:

Քեզ չեմ մոռանա և ոչ մի վայրկյան,
Եմ ամենալավ հեռավոր աղջիկ,
Այժմ էլ այս ցուրտ ձյունի մեջ պառկած
Զգում՝ եմ ըստ ջերմ համբուլոն առաջին:

Ա՛խ, ինչքան լավ է զգալ ամեն սպահ,
Որ հեռվում քեզնով շնչում է մի սիրտ,
Որի կարոտից դառնում ես անահ
Եվ մահը հաղթում փողձության մեջ բիրտ

Սիրո կրակով ըստ նվիրական
Մրրիկների մեջ դարձել եմ տոկուն
Եվ սիրտու եմ բացել երկնքի պես լայն՝
Որ կովեմ, հաղթեմ, երգով դառնամ տուն:

Ես թե եմ առել, անխորտակ ոդի,
երբ հիշել եմ քո սերն անարատ,
երբ քո նկարը սիրով ամոքիչ,
Բոնել եմ հոգնած աշքերիս առաջ:

Եվ կպահեմ քո կարոտը հավերժ
Մրտիս երկնքում, որպես արեգակ,
Նա է, ինձ մղել մարտերի մեջ թեժ,
Դարձել իմ հոգում ավյուն ու կրակ:

Մարտական կյանքի օրերը ահեղ
Կոփեցին խաղառ սիրոս աննկուն,
Բայց մնացել եմ ես կրկին ջահել
Եվ ինձ լոկ դու ես կարոտով հուզում:

Քո կարոտի հետ կրում եմ իմ մեց—
Վրեժի ցասման բոցավառ հրդեհ,
Իմացիր նրա հրի դեմ անշեց,
Չեն մնա անդամ անտիկ բերդեր:

Ես որպես մարտիկ-զինվոր աննկուն
Մեր հաղթանակի ծարավով անհազ,
Կովից ևս դարձած սկիտի բերեմ տուն
Մեր խաղաղ կյանքի պայծառ ապագան:

Ճ Ա Կ Ա Տ Ո ՒՄ

Մենք նայում էինք դաշտը անծայր,
Ուր որոտում էր մարտը ուժգին,
Մեր դեմ կանդնել էր մի փոքրիկ սար,
Ռւր դարանել էր նենդ թշնամին:

Երկինքը ձյուն էր մաղում առատ.—
Եվ հեռուները ճերմակ հաղան,—
Վտակներն ամեն սառցակալոծ
Եվ բուրը ելավ ահեղ ձմռան:

Բայց ոտքի ելանք մենք մոլեգին,
Ինչպես մրրիկը, ամպրոպն ահեղ.
Մեր զենքերը զոռ որոտացին—
Մարտը թեժացավ արյունահեղ:

Եվ խելակորույս ոսոխն ընկավ
Մեր ոտքերի տակ սարսափահար,
Եվ հաղթանակի այգը ժպտաց
Մեր սրտերում և երկրում անծայր:

Մեր շուրջը թվաց ձմնուր ցուրտ
Դարձավ մայիսյան գարուն թուլիլ—
Զյան փաթիլները—ծաղիկներ էին,
Որ իշնում էին մեղմ ու սփոփիլ:

Օ՞, մեր ճերմակած անափ հեռու,
Մշուշից ելնող սոկե արև,
Ելան մեր հոգում հույզեր եռան՝
Եվ խնդությունը մեր վարարեց...

Առաջին անդամ կարծիս տեսանք
Մեր ստեպն այդքան վեհ ու չքնաղ
Չմեռը—ինչպես լուսն հմայք,
Որ ունի հաղար երգ ու քնար...

Դա հաղթանակի հաճույքն էր մեծ
Դառնում մեր սրտում ուժ ու կրակ,
Եվ թվում էր թի հանդերը միզ
Մաղթում են հաղար երջանիկ կյանք...

Ա՞յս, ինչքան լավն էր պահն այդ վսեմ,
Այդ առավոտը, ինչպես բյուրեղ,
Չմոան դաշտերը—դարձած եղեմ,
Քամու մեղեղին—այնքան լուսեղ...

Ինչքան լավն ես դու, հայրենի հող,
Մեր հանդեր զմբուխտ, սարեր առծաթ,
Մեր նվիրական աշխարհի հողմ
Եվ մայր բնության տարերք աղատ...

ԵՐԵՎԱՆԻ ԱՆՁՐԵԱԾ

Ծաղկած ոլուրակում շուշանը քնքուշ,
Կապեց անձրիկոյ լուսաշող մանյակ,
Վաղերն այդու մեջ շրթելով անուշ
Օդի բուրմունը լմպիցին անհագ:

Ծիածանի զով համբուլից լազուր,
Իմ եռեանը զգաց ջինջ հուզում
Եվ Աբովյանի ծառերը նազով
Սուզվեցին քնքուշ կանաչ երազում...

ՍՈՒԼԵՑՄԱՆ ՍՏԱԼՄԿԻ

Նօտում է ուսի ծառի տակ երկար
Խմաստուն լեզդին,
Եվ երգում ցնցող կուիվ ու պայթար
Խոսքերով ոսկի:

Խմբվում են ուրախ իր շուրջը Հաճախ
Հովհիվներ սարի,
Ունկնդրում զվարթ ծերունու խիզախ
Քնարի լարին:

Հեռվում արեն է լեռան կատարին
Խցնում Հոգնաբեկ,
Տարածվում են խոր կիրճերում նորից
Ստվերները թեք:

Թուխ փափախի տակ վահվում են Հպարտ
Աշթերը նրա,
Սահում են ճկուն մատները Հանդարտ
Էտրերի վրա:

Եվ Սուլեյմանն է լեզգիների մոտ
Ժպիտով երգում,
Երգում է ուրախ մարդկանց մեծադորժ,
Եվ կյանքը բերկում:

Նա Ստալինի հանճարն է երգում
Հուղիշ ու գերող,
Մեծ առաջնորդի փառքն է ներբռնում
Հնչեղ երգերով:

- Խում են նրան ամենքը հուղված—
Հովիվ, պատանի,
Անգամ Կազբեկն է լսում հիացած
Մեծ Սուլեյմանին:

Ողջ հայրենիքն է ունկնդրում նրան,
Երբ երգում է նա,
Որ փառաբանում, գովում է սրտանց
Հերոսներին անմահ:

Նրան սերունդներ սիրով կհիշեն,
Հավետ փառք կտան,
Նա է մեծը, ով կառուցում է կյանք,
Ու վեհ երգում այն...

Չ Ն Ս Ա Ղ Ի Կ

Մարտի դժվարին ճամփերով անցած՝
Ես հասա մի օր էլբայի ափին,
իմ երազների գարունը բացված՝
Ճախրում էր թեթև թևով կառապի:

Շուրջս ցնծում էր աշխարհը այնպես,
Ընկել էր հավետ մահը դավադիր,
Մեր հաղթանակի դրոշներից վես
Դարձել կարծես երկինքը կարմիր:

Եվ նստել էի էլբայի ափին,
Կարոտիս բոլոր աստղերը վառած՝
Այդ պահին ահա ձյունի մոտ վերջին
Տեսա մի քնքուշ ձնծաղիկ բացված:

Թերթերին նրա ցողիկ կար սառած,
Ցողունի վրա նորաթել մետաքս,
Եվ սիրտս կրկին նոր թևեր առած՝
Սակառնեց դեպի գիրկը, Մայր Արաքս:

Տեսա հայացքդ, հայրենի՛ երկիր,
Հովտաշուշանի առելներով զինչ,
Զգացի բույրը բեղմնավոր տերկիդ,
Կարոտով տված համբուլրդ վերջին:

Վերստին իմ մեջ շառաշեց Զանգում,
Լեռներդ ելան սրտիս հանդերում,
Որոնց համար ես տարիներ անքում
Մաքառեցի այն արնոտ մարտերում:

Թովիշ ձնծաղիկ, փոշուդ մեջ անբիծ,
Տեսա ժպիտը հեռու սիրուհուս,
Սլացավ անդառձ օտար ափերից
Դեպի հայրենիք աղավնին հոգուա:

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Զ

Չեր գիրկն եմ գալիս, դաշտեր ծաղկած՝
ինձ միշտ հարազատ բերրի ցելեր.
Պուրակներ, մարգեր կանաչ ներկված,
Եվ կածաններ իմ — փոված թելեր...

Քայլիր նժույզ իմ, դոփիր ազատ,
Երկար ճամփից ենք վերադառնում,
Թափահարում է ճյուղը կաղնին,
Ուրախ նա մեղ է դիմավորում:

Հոնին ներկել է թշերն իր ալ,
Կարմիր թաշկինակ պարզել ճամփիս,
Եվ մանուկներն են դուրս եկել կալ՝
Աշքալուս տալիս ծաղկած պապիս...

Այս ծմակներում շլջել եմ ես,
Որպես գառնարած՝ ջահել հովիվ,
Քաղել եմ մորի, բուրավետ սեզ,
Սծել թարմ շունչը գարնան հովիւ

Թումանյանին եւ ես կարդացել
Այս կիրճերի մեջ, ժայռերի տակ,—
Ծվ Անուշին եմ ես կարեկցել՝
Եվ Համբոյին խեղճ՝ դառնավիճակ

Ու եղել է նա՝ Թումանյանը մեծ
Ինձ հետ մտերիմ, իսկ ես մի հովիվ,
Ինձնից անբաժան օր ու գիշեր
Շրջել է այստեղ կիրճ ու հովիտ:

Շղզո՞ւն, ընկերներ իմ հարազատ,
Ահա ձեզ հետ եմ, կրկին ջահել,
Հաղթանակով ես վերադարձա,
Եվ պատիվը ձեր բարձր եմ պահել:

Ա Ր Ն Ո Տ Ա Ն Մ Ո Ռ Ո Ւ Կ

Իրիկնամուտ էր, հիշում եմ այնպես,
Արևի ոսկե կառքն էր ընթանում
Դեպի լեռների կատարները վես,
Դեռ որոտում էր մարտը անտառում:

Հրանոթներն էին որոտում ահեղ,
Բոցե շուրթերով հորիզոնը կիզում.
Ասես թափվում էր երկնից հրահեղեղ
Եվ երկրի վրա ամեն ինչ լափում:

Եվ ես հիշում եմ այդ պահը դաժան,
Կովում էր մեզ հետ մի քնքուշ աղջիկ,
Կրակում էր նա լուռ ու անբարրառ
Լարած իր ջահել ուժերը վերջին:

Նա էլ մեզ նման մարտիկ էր խիզախ,
Սակայն և քնքուշ մայիս էր ծաղկած.
Նրա հայացքից այնքան կենսուրախ
Ճոլում էր սիրո գարունը ծագած:

Եվ իր կենսահորդ հոգու արևի
Զերմությամբ էր լոկ մեզ ոգեշնչում,
Երբ հոգնում էինք՝ նա իր քաջարի
Չայնով մեզ նորից կովի էր կանչում:

Եվ օրհասական մի ակնթարթում
Իր կուրծքը խոցեց ոսոխը հանկարծ.
Աղջկա այտերի կարմռաթով գույնը
Աշնան տերեկ պես դարձավ դեղնած:

Նա խոր հառաշեց և շնչում վերջին
Չեռքով բռնեց մի տրտում անմոռուկ,
Եվ վայրի ծաղկի բնքուշ առելին
Նետեց իր հանգչող ժպիտը դալովկ:

Եվ անմոռուկի թերթերին անելծ
Ընկավ իր արյան կաթիլը բռուր,
Կարծես ծաղիկը ցավից կծկվեց,
Անիծեց անգութ թշնամուն ոսոխ...

... Անցավ մի տարի, ծագեց աշխարհին
Խաղաղ օրերի դարունը շքնաղ,
Սակայն ամեն պահ հիշում եմ կրկին
Մարտերում զոհված այն լավ աղջկան:

Մի օր պնացի շերմին իր այցի,
Որը հանգչում էր հանդում անաղմուկ,
Անել էր բնքուշ—այնպես վեղեցիկ,
Հողաթմբին իր մի վառ անմոռուկ:

Դ Ե Պ Ի Ս Ո Ւ Ն

Ահա շարքեր երկաթաձույլ շքերթով,
Մարտիկները, որ դաւնում են կրկին տռան,
Հաղթանակի օրն է մաղղուն բախտ կերտող՝
Մեր երկնքից թափում անհուն խնդություն։

Մառե՛ր, փռեք դրոշները ձեր գարնան,
Եվ հնչեցեք կանաչաղեղ շեփողներ,
Արցունքի տեղ հայացքներից մեր կանանց
Թող կաթկթեն ծիածանի բեկորներ։

Չնծաղիկներ, փռեք թեղթեր մետաքսե,
Էլ մեր հոգում շկա ոչ մի մառախուղ,
Աստղեր, վառած առեշներով ձեր լուսե
Ողողեցեք ամեն քաղաք, ամեն գյուղ...

Դուք մեխակներ և հարսնուկներ ոսկեծոր,
Փռեցեք ձեր պսակները տոնական.
Վերջին անգամ որոտացեք ահավոր,
Թնդանոթներ, հանդիսավոր, հաղթական։

Շեփորեցեք շոնդալից, շեփորներ,
Որոտածայն հաղթանակը բարբառեք,
Ավետեցեք խաղաղություն հարատէ՝
Աշխարհներին տառապանքից հոգնարեկ:

Փա՛ռք ձեզ, փա՛ռք ձեզ, ով մարտիկներ
աննկուն

Որ դուք պատվով, հաղթանակով տուն դարձաք
Ձեզ հետ բերիք մայր երկրին նոր գարուն
Եվ մարդկության համար երկար, խաղաղ կյանք:

Հ Ի Շ Ո Ւ Մ Ե Մ

Հիշում՝ եմ, մութ էր, խստաշունչ ձմեռ,
Չորն էր հառաջում հրդեհների մեջ,
Մենք բլինդաժում պարում էինք դեռ,
Տոնում նոր աւարվա դալուստը վսեմ:

Թեկուղ մոտիկ էր մահը, լոկ մի քայլ,
Չէր իջնում սրտում մեր ոչ մի ստվեր,
Մենք երդում էինք ցնծությամբ մի այլ,
Ինչպես մարտական խիզախ ընկերներ:

Եվ ինչ որ մեկը դիրքերից ոսոխ
Մի գերմանական հին երգ էր երգում.
«Ախ, մահ արարիշ, թող դառնամ ես հող,
Այս պահին միայն քեզ եմ երազում...»:

Ու մեզնից մեկը գիշերվա մթին
Ամբողջ հասակով վեր ելավ տեղից,
Երգեց նա սիրած մեր երգը ուժգին՝
Տարավ գրոհի մեզ ցասումնալից:

ՍԻՐՈՓԱՀ

Ես այն պահն եմ սիրում գաղնան,
Երբ ծաղկում է փշատենին,
Որ բռնում է իմ տան ճամփան
Երազանուշ իմ սիրուհին:

Փշատենին արծաթ բռով
Բույր է տալիս մեր երազին
Եվ հավքերն են բյուր խմբերով
Երդում մեր ծով սիրո մասին...

Եվ ժպտում ենք անվերջ իրար՝
Կարծես դարձած երգ ու երազ.
Դուրդուրանքի երկինքն է հար
Տալիս աստղեր մեղ հեղանագւ

Եվ մայիսն է անափ ցնծում,
Մեղ պսակում իր համերդով,—
Եվ աշխարհն է ոսկեզօծվում
Սիրո հավերժ հերիաթներով...

Ա. Ռ. Ա. Վ. Ո. Տ

Եռավուտը բացվեց ահա,
Կանա՞լ, կանա՞լ մեր դաշտերին,
Եվ արտերում հեռո՞ւ, անծայր
Հնչեց երդը թռչունների:

Տրակտորը կրկին հևաց
Եվ ակոսեց հողը բերրի,
Աշխատանքի ոգին եռաց
Համայնական մեր դաշտերի:

Կաղնիները ուրախ կանգնած
Մեր հանդերում գեղեցկաթով,
Դլուխնիրը հպարտ պահած,
Կանա՞լ, կանա՞լ, գանգուրներով:

Ց Ն Մ Ա Ւ Թ Յ Ո Ւ Ն

Տոն է գյուղում, ծաղկահանդե՛ս, Հարսանիք,
Տուն է եկել հերոս տղան ճակատից,
Հնչեք ուրախ, զվարթաձայն, թառ, սրինգ,
Մայրը ուրախ լաց է լինում կարոտից:

Գյուղի վրա ճերմակ ամպեր բարձրացան,
Որպես նշան խաղաղության ու բերքի
Գորգեր կանա՛չ ասեղնագործ մայիսյան,
Տարածվեցեք ոտքերի տակ հերոսի:

Շառաշեցե՛ք կուք, դարավոր կաղնիներ,
Դափնե պսակ հյուսե՞ր այսօր իր համար,
Մանուշակներ փոեր, կապույտ առավոտ,
Հերոս տղան հաղթանակով տուն դարձավ:

Ե Ե Ր Փ Ա Ղ Ո Յ Ո Ւ Մ

Այսօր տոն է մեր փողոցում,
Ժպտում է արևը պայծառ
Մեր երկնքից այնպես լազուր,
Մեզն ու մշուշ անհետացավ:

Կեցցես դու, մեր մեծ հաղթանակ,
Մենք քեզ կովով, զենքով բերինք,
Որ աղբյուրներն երգեն զանդակ,
Խաղաղ երգը մեր դաշտերին

Անտառներ, ձեռքերով դալա՛յ,
Տարածեք դուք կանաչ գոռգեր,
Ծիծաղեցեք, արտեր ու հանդ,
Տոն է այսօր փողոցում մեր:

ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

S U N

(Ըստ Մ. Ռիլսկու)

Դատարկ խրճիթ ու ծուխ, վրան,
Այդի տիսուր մշուշի մեջ,
Այսպես ահա Ռւկրախնան
Հանդիպեց իր որդինեղին.—
Եվ նա երգեց ուրախ այսպես.—

«Օ», զավակներ, հուշն անցյալի
Թռղող ոչ մի պահ ձեզ վընկճի,
Թեկուզ տեսանք մենք վշտալի
Պահեր այնքան ու դառնություն:

Նզովքի պես իմ հողերով—
Իր շարությամբ, ոսոխն անցավ,
Ծածկեց երկիրն հրդեհներով
Քերրի դաշտերն ամայացան:

Այնպես տիսուր հեկեկացին
Մայրեր ու ծովու սարսափահար,
Նրանք ցավով ձեզ ճամփեցին
Դեպի մարտի դաշտը գժվար:

Մեկը լնկավ ճանապարհին,
Մյուսը թաղվեց հանդում հեռու,
Մեկն էլ փախավ օտար երկրից՝
Կարգերից բիրու և ահարկու:

Եվ միացավ նա վրեժով
Հերոսներին մեր պարտիզան,
Կովեցին բազ զավակներն իմ,
Տարան բեռը դժվարության:

Եվ կրակի բոցի միջից
Նայում էի դեպ արևելք,
Որտեղ կռվում էիր խիզախ,
Որդիներ իմ կամքով անթեր:

Կովում էիր դուք քաջարի՝
Սղբայրությամբ ոռոմի՛, հալի՛,
Մեծ կորուստներ ես կրեցի
Զավակներս այնքան ընկան:

Այժմ փառքով, հաղթանակով
Վերադարձաք հայրական տուն,
Ու թող ծաղկի հողը մեր ծո՛վ,
Չեր բրտինքով կամքով օժամտ

Բնկածներին հարգանք ու փառք
Ապրողներին՝ գովք, հաղար կյանք,
Նրանց մայրն է ապրում հաղարտ
Էլ ավելի հզորացած:

Իմ որդինե՞ր, դուք ցնծացե՞ք,
Սեղանի քով հավաքվեցե՞ք,
Եվ հայրական ձեր տանը մեծ
Դուք պատվավոր տեղ նստեցեք...»:

Ուկրաինա, մա՞յր հարազատ,
Լսելով քո ձայնը գթուտ
Զավակներդ են տալիս ահա
Քեզ պատասխան.—

— «Հաղթանակով մեր վառվեցին
Արշալույսի աստղեր այնքան,
Դու տվեցիր մեզ անսահման
Կովելու ուժ, հաղթելու կամք:

Օրը հասավ դատաստանի՝
Մենք թշնամուց վրեժ առանք
Եվ քո փառքի թևով արի
Կարպատներից այն կողմ անցանք
Եվ Կիևի վերքն ենք բռւժում
Բռւժիլ ու վեհ մեր ձեռքերով,
Նոր ու չընալ օր է բացվում
Մեր աշխարհում այս հոգեթով:

Մեր սև ծովն է ծփում ուրախ,
Բալթիկի վեհ ձայնն է լսվում,
Մեր օջախի ծուխն է նորից
Դեպի երկինք խաղաղ ձգվում:

Եվ հասկեցն են մեր արտերում
Նորից լցվում ցորնի ոսկով,
Ու ջրերն են մեր գետերում
Հոսում հանգիստ ու անվրդով:

Առաջնորդն է մեծ, Կրեմլից
Մեզ թև տալիս և կյանք և ուժ,
Բացվել են մեր նոր ցնծալից
Երջանկության օրերն անուշ...»:

Այսօր տոն է, վաղն աշխատանք,
Ուրախության երգն է հնչում.—
«Եղբայրության համար խմենք,
Եվ կյանքը մեր փառաբանենք...»

Գովքն ու փառքը եկեք երգենք
Մեզ հարազատ այն մեծ մարդու,
Որի կամքով հաղթեցինք մենք,
Եվ բերեցինք խաղաղություն»:



(Ըստ Մ. Ռիլսկու)

Եեվշենկոյի Դնեպրը վեհ,
Սովետական ու հարազատ
Տարածվել է, հոսում անվերջ
Թափվում կապույտ ծովը աղատ:

Փառքն է խառնվել ալիքներիդ,
Եվ ափերիդ և թեղ վրա
Իջնում է վառ լույսն աստղերի,
Արշալույսի նման վարար:

Քո դաշտերում մարդիկ աղատ,
Հախուռն, ինչպես հորդուն դետեր,
Ինչպես Դնեպրը մեր մայիսյան
Դուրս են եկել, տե՛ս անվեհեր...

Նրանց ձեռքին դրոշներ ալ
Շածանվում են վեհ ու պայծառ
Եվ լույսերից հաղարափայլ
Հորիզոնն է հրդեհվում վառ:

Իր հինավուրց հեռումերից
Թարձրանում է Լվովը մեր,
Թարձրանում է նա խնդալից։
Ազատ ու նոր և անհրեր։

Նա խառնում է շողերի հետ,
Հազար կողմից վարդեր հադած
Եվ Լվովի վրա հավետ
Կարստիր աստղն է վառ ճառագած։

Որ կողմ նայես դեմքեր ժպտուն,
Որ կողմ նայես երգ ու նվագ。
Ողջ սրտեր են ուրախ ցնծում,
Ողջույն գալիք—երջանիկ կյանք։

Ե Ր Գ Ի Ւ Ե Վ Ի Մ Ա Ս Ի Ն

(Մ. Ռիլսկուց)

Փա՛ռք քեզ, Կիե՛վ,
Օ՛, մեր քաղաք ոսկեքանդակ,
Դու դարավոր, ազնիվ ու վեհ
Դեղեցկաթով:
Փառքը երկրին մեր հայունի՝
Կրկին ահա աստղը կարմիր
Վառվում է քո մեծ կրծքի վրատ
Անհետացան
Օրերը քո, դժնի այնքան,
Թշնամական ոհմակները
Փոշի դարձան:
Նորից հզոր Դնեպրի ափին
Սովետական—
Մեր Կիևն է շողում անգին:
Փարթամորեն ու ոսկեշող
Ծաղկում է նա,
Փթթում հզոր
Ուկրաինական Կիև մեծ:

Մենք բոլորս
Մի խնդությամբ,
Լցված ենք վառ,
Կորովով ջերմ
Ու հաղթական,
Բոլշևիկյան...
Մեզ հետ են մեծ ժողովուրդներ՝
Եղբայրական ու հարազատ,
Հաղթանակի հավատով սուրբ
Միշտ հզոր ենք ու աներեր:
Փոթորկածին գրոհներում
Աղատության արևով լույս
Կիւը միշտ մեզ սիրելի
Քույրն է եղել հզորազոր
Այնքան սիրված Մոսկվայի

Հ Ա Դ

(Քատ Անդրեյ Պերվոմայսկու)

Աշնանային ճանապարհ. աշնան դեղին նեղ կածան
Խուզաքան ահա դաշտերում մարդկանց նման մահացած.
Պտտվում են քամու մեջ տերևները դողդոջում,
Ահավասիկ սյուներ մեծ, և ամպերը ցած իջան,
Մի պահ հանգիստ իմ սրտում բարձրանում է ծովացած
Զգացումը տագնապի ու մորմոքը հարածուն.
Օ, ինչպես են դողդողում, կտրտած ու անհաժար
Հեռախոսի լարերը հողմերի մեջ անդադար—
Եվ թվում է արևն է հորիզոնից քո հավերժ,
Ռւկրախնա, մթագնած ընկնում ահա դահավեժ:
Դեռ մանկության օրերից եղել եմ քեզ մտերիմ,
Այգիներիդ ստվերում ես առել եմ հանգիստն իմ.—
Սիրում էի հանդիպել քեզ հետ պահին լուսայգի—
Արահետն էր ընթանում արտի միջով ուկեգույն,
Դեպի աղբյուրն այն վճիռ, որ հոսում էր կարկաշուն,
Ուր ձկնիկն էր թպրտում ուռկանի մեջ արևի...
Նրա վրա վաղորդյան էր ցողերով ցնծագին
Թեքվել էր լուս, գլխակախ հարյուրամյա փռոշին,
Բարձրանում էր դեպի վեր, Ռւկրախնա, բարեսիրու,

Թո գյուղերի մշտական ծուխը կապույտ ու հանգիստ:
Օ, հեռավոր օրեր ջինջ, անամապ երկինք կապուտակ,
Զեզ ևմ հիշում կրկին ևս այնպես խորունկ ու հոտակ—
Ճռինչի տակ ավտոյի, որ սուրում էր խենթավազ,
Շողում էին հայացքիս եզերքները իմ սիրած,
Հակառակ այդ ցուրտ օրվա սառսուռներին մոլեգնած
Հեռու էին, բայց նրանք երազի պես իմ անհաս...
Եվ ավտոյի փափկոցում տրտում կոթնած անընդհատ
Դիտում էի քո բերրի տափաստանը սկահող.
Այդպես ահա դաշտերում անձրեսի տակ հորդացող
Ես հրաժեշտ տվի քեզ, Ուկրաինա հարազատ...
Եվ հեալով կանգ առավ մեր մերենան սլացող,—
Ես կուցած ու գետնից բարձրացրի մի բռտ հող՝
Աշնանային անձրեսի ցուրտ շիթերով ողողված,
Նա ծանրացավ ձեռքիս մեջ՝ սրտի նման անարյում.—
Մեր հետեւմ հեռավոր կրակներով շառագույն
Փովել էին հրդեհներ.—Սիրտս հուզված խոր դողաց,
Աղաղակը ավտոյի, երբ ևս նորից լսեցի—
Մեր մերենան թափ առած անցավ առաջ ճեպնթաց,—
Բայց ևս սեղմած ափիս մեջ շընետնցի դեպի ցած
Մի բռտ հողը քո անուշ, Ուկրաինա սիրելի...
Բոլոր, բոլոր մարտերի միջով նրան կըտանեմ
Արյան նման իմ վառվող, խոհերի պես իմ վոհմ,
Իմ հոգին է նրա հետ միաձուլվել առհավետ
Եվ պահում է նա իր մեջ իմ ողջ բախտը, ապագան,—
Մոխրի նման Կառասի հնչում է նա զնդաձայն

իմ սրտի մեջ և տալիս ուժի գետեր, ինձ հավետ,
նա դարձել է ուղեցույց պայքարի մեջ իմ անշեղ
Եվ մղում ինձ դժվարին մարտերի մեջ փառահեղ...
Կըգա օրը, երբ կրկին ետ կըբերեմ անարատ
Մի բուռ հողը ըո տված, Ուկրաինա հարազատ...

Իսկ եթե գոռ ընդվզման տարերքի մեջ ես ընկնեմ
Եվ արնաքամ ձեռքերս դեպի վերև տարածեմ
Ինչպես գիրկը իր բացած կարոտակեզ սիրահար
Ու շըհասցնեմ ասել գեթ.—«Մնաք բարով, ընկերներ,
Դնացեք դեպ Արևմուտք...»—ճանապարհին շուշացած
Կհասնեն ինձ քաջասիրտ եղբայրներիս անվեհեր,—
Եվ հայրենիքն իմ գթոտ վրաս մի պահ խոնարհած՝
Կըտեսնի հար պահպանված իր զավակի սրտի մոտ
Հավերժորեն կրակոտ, սուրբ շիթերով բոցավառ
Մի բուռ հողը ըո անշեղ, Ուկրաինա իմ պայծառ...

ՑԱՆԿ

	էջ
<i>Տոնական գիշեր</i>	3
<i>Ողջույն, Բարու</i>	6
<i>Մոսկվա</i>	8
<i>Մարտիկ բանաստեղծի ողջերթը պարտիզանուհուն</i>	9
<i>Հողի ուժը</i>	11
<i>Քնքշություն</i>	13
<i>Հայաստան</i>	15
<i>Կարոտ</i>	17
<i>Դեղձանիկն ու կկուն</i>	18
<i>Զրույց որդուս հետ</i>	20
<i>Ողջույն</i>	23
<i>Զագիր գյուղի ընկերներին</i>	24
<i>Հնձվորութին</i>	25
<i>Երևան</i>	26
<i>Զագիր</i>	27
<i>Նամակ</i>	28
<i>Ճակատում</i>	30
<i>Երևանի անձրևը</i>	32
<i>Սուլեյման Ստալսկի</i>	33
<i>Զնծաղիկ</i>	35
<i>Վերադարձ</i>	37

	էջ
Արնուու անմռնուկ	39
Դեպի տուն	41
Հիշում եմ	43
Սիրո պահ	44
Առավոտ	45
Ցնծություն	46
Մեր փողոցում	47

ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տոն (ըստ Մ. Ռիլսկու)	48
Շեվշենկոյի Դնեպրը վեհ	52
Երգ Կիևի մասին	54
Հոդ (ըստ Լեռնիդ Պերվոմայսկու)	56



**Տեխ. խմբագիր Ա. ՄԱՏԻՆՅԱՆ
Պատ. խմբագիր Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Վ.Ֆ. 02428 Պատվեր 2, Տիրաժ 3000.

Տպագրական 2 մամ., հեղ. 1,4 մամ.:


Հանձնված է արտադր. 6/XII 1947 թ.:

Ստորագրված է տպագր. 20/III 1948 թ.:


ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից

Հրատ. և Պոլիգրաֆ վարչության

№ 3 տպարան, Երևան, Ալավերդյան 65



ԳԻՒԶ 3 Ա.



5853